

ՀԱՅԱՍՏԱՆԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

Հայագիտական հետազոտությունների միջազգային ընկերությունը (As. sociation Internationale des Etudes Arméniennes). որը ստեղծվել է ընդամենը մի քանի տարի առաջ, հետևողականորեն իր գիտաժողովներն անցկացնում է երկու տարին մեկ: Ընկերության հիմնական կորիզն են կազմում Եվրոպայի տարրեր երկրների քարձրագույն ուսումնական հաստատություններում գործող հայագիտական կենտրոնների առաջատար ուժերը՝ օտարազգի և հայ գիտնականներ, բայց նրա աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերում նաև Մերձավոր արևելքի, ԱՄՆ-ի, Կանադայի և այլ երկրների հայտնի հայագետներ, սփյուռքահայ համայնքների առանձին ներկայացուցիչներ: Հայագիտական հետազոտությունների միջազգային ընկերության նպատակն է համակենտրոնացնել հայագիտական ուժերի գործունեությունը, իմի բերել և գիտական շրջանառության մեջ գնել նորագույն ուսումնասիրությունների արդյունքները, հասնել հետազոտական նոր ուղիների ու եղանակների հայտնաբերման, նպաստել հայ ժողովրդի պատմության ու մշակութի նկատմամբ եղած հետաքրքրության աճին: Ընկերություն ունի իր վարչությունը, 1984 թվականից նրա պրեզիդենտն է անվանի հայագետ Մ. Սթոունը, իսկ քարտուղարը՝ Յ. Վալտերսենը:

Մինչև վերջերս Հայագիտական հետազոտությունների միջազգային ընկերությունը կազմակերպել և անցկացրել էր երեք գիտաժողով: Չորրորդ գիտաժողովը տեղի ունեցավ 1988 թ. հոկտեմբերի 13—15-ին Շվեյցարիայի Ֆրիբուրգ քաղաքում, որը երկրի հնագույն բնակավայրերից է և համանուն կանտոնի վարչական կենտրոնը: Քաղաքն ունի մշակութային մի շարք հաստատություններ, այդ թվում նաև համալսարան, որի հիմնադրման հարյուրամյակը լրանում է այս տարի: Հենց համալսարանում էլ, որի ռեկտորատն ու աստվածաբանական ուսումնասիրությունների բաժանմունքն առանձին նախաձեռնություն էին հանդես բերել հայագիտական ընկերության հերթական նստաշրջանը հատկապես Ֆրիբուրգում անցկացնելու ուղղությամբ, կայացան գիտաժողովի նիստերը:

Երեք օրվա ընթացքում տեղի ունեցած 14

նիստերում ընթերցվեց 44 զեկուցում: Նիստերը խմբավորված էին ըստ հետազոտական ուղղությունների՝ լեզվաբանություն, հայոց պատմություն, հայ եկեղեցու պատմություն, արվեստի պատմություն, քարվանդական երկեր, հայ գրականություն, բնագրեր և խմբագրություններ, կոմպյուտերային կիրառություն և այլն:

Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան ավելի քան երկու տասնյակ օտարազգի հայագետներ: Նոր նյութերի արծարծմամբ և ուշագրավ հարցադրումներով հատկապես առանձնացան Ջ. Բալենգիի (Իտալիա) «Հայերենի նշանակությունը հարակից լեզուների համակարգում», Բ. Ութիի (Ֆրանսիա) «Միջնադարյան հայկական մի աստվածաբանական գրադարան», Մ. Սթոունի (Իսրայել) «Հայկական նոր Ադամգիրք», Ժ. Մ. Քիեբի (Ֆրանսիա) «Սեպուհ լեռան հուշարձանները», Հ. Գուլի (ԳՂ) «Շարականցի օրհներգերի աստվածաբանական մեկնաբանությունը», Ա. Պրեմիլի (Լեհաստան) «Երասական հայերենի խուլ և շնչող բաղաձայնների տարբերակիչ հատկանիշները զեկուցումները: Բանասիրական-աղբյուրագիտական արժեքավոր խնդիրներ շոշափեցին նաև Հ. Լեմստեի (Դանիա), Բ. Կուլի (Բելգիա), Ք. Հանեիկի (ԳՅՀ), Յ. Վալտերսենի (Նիդեռլանդներ) ելույթները:

Սփյուռքահայ ուսումնասիրողներն իրենց զեկուցումներով անդրադարձան ինչպես պատմաքաղաքական, այնպես էլ բանասիրական և մշակութաբանական մի շարք խնդիրներին: Ն. Գաբունյանի (ԱՄՆ) զեկուցումը նվիրված էր V—VI դդ. հայ եկեղեցու քաղաքական կողմնորոշման, Ա. Բուրիկանյանի (Լիբանան)՝ Միշին Արևելքից հայության վերջին արտագաղթի լուսաբանմանը: Բնագրագիտական-աղբյուրագիտական արժեքավոր պրպոմանների արդյունք էին Մ. Մինասյանի (Շվեյցարիա) «Բարսեղ Կեսարացու «Կեցօրեայի և «Գիրք Սենդոցի» քննական բնագրերը», Գ. Ուլեմսենի (Իտալիա) «Եղիշի «Յաղագս միանձնացաճառը. աղբյուրների և մեկնաբանման խնդիրներ» զեկուցումները: Դ. Սաֆայանը (Կանադա) և Պ. Մվալլյանը (Իտալիա) խոսեցին հայերեն լեզվաոճական որոշակի ձևերը այլ լեզուներով թարգմանելու գիտական շահանիշների մասին:

անելով ինչպես տեսական, այնպես էլ գործնական ընդլայնել և հարազանացնելով Ա. Սաենցյանի (ԱՄՆ) «Գիտությունը Գլխավոր համարանում», Վ. Այվազյանի. (Շվեյցարիա) «Ժամանակն ըստ Հայոց կանոնագրեր», Ա. Դրոստ-Արդաբադի (ԳՂՀ) «Հիմնարկության ամերիկացիները հայ և բյուզանդական գրականությունների մեջ» գեկուցումները բացահայտեցին միջնադարյան Հայաստանի դիտական մտքի, հոգևոր-եկեղեցական սպասավորման և դրական ըմբռնումների հետաքրքրական էջերը, ցույց տալով այդ ոլորտներում երևան եկող յուրահատկությունների ազգային-մշակութային նշանակությունը, Առանձին ուշադրության արժանացավ Ա. Քոփուզիանցի (Ֆրանսիա) հաղորդումը՝ «Մաքինթոն» մակնիշը կրող մանրակարգիչ (microcomputer) «հայացման» ուղղությամբ իր ձեռք բերած արդյունքների և դրա տեղեկատվական հսկայական հնարավորությունները, բազմազան տառատեսակներով տպագրական կարողությունները հայագիտության բնագավառներում կիրառելու օգտավետության մասին:

Հայագիտական հետազոտությունների միջազգային ընկերության Ֆրիբուրգյան գիտա-ժողովին՝ մասնակցեց նաև Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտնականների մի պատվիրակություն՝ ակադեմիկոս Գ. Զահուկյանի ղեկավարությամբ: Սա փաստորեն սովորական հայագետների առաջին մասնակցությունն էր ընկերության գործունեությանը:

Գ. Զահուկյանը գեկուցեց անգլերեն՝ «Ապրիլ են արդյոք հայերը Առաջավոր Ասիայում նախքան մ. թ. ա. XII դարը» թեմայով: Զեկուցողն ամենից առաջ կանգ առավ այն ավանդական տեսակետի վրա, ըստ որի՝ հայերը ծովային մյուս ժողովուրդների, հատկապես փյունիցիների հետ մ. թ. ա. XIII դ. վերջին կամ XII դ. սկզբներին Բալկանյան թերակղզի-գույց շարժվել են Փոքր Ասիա, մի քանի դար ապրել այդտեղ և ապա մ. թ. ա. VII—VI դդ. տարածվել պատմական Հայաստանում: Բազմաթիվ փաստերի վկայաբերմամբ նա ցույց տվեց, որ այս ավանդական տեսակետը, ինչպես նաև սրա մյուս տարբերակը, թե հայերը պատմական Հայաստանում հայտնվել են մ. թ. ա. XII—XI դարերում, խախտում է շենվելով իր նոր հետազոտության արդյունքների վրա՝ գեկուցողը նշեց, որ հայերը մ. թ. ա. XIV—XIII դդ. եղել են հիշատակված Հայաստանի հիմնական բնակիչները, սերտ շփման մեջ գտնվել խեթա-ուրարտական ժողովուրդների և Փոքր Ասիայում հաստատված ակկադական գաղութների հետ: Զեկուցողը միաժամանակ

անդրադարձավ այն շփումներին, որ եղել են հայերենի և խուրեքենի, ինչպես նաև հայերենի և Առաջավոր Ասիայում ապրած հին հնդկական ցեղերի լեզվի միջև: Այս կապակցությամբ Գ. Զահուկյանն առաջ քաշեց և հաստատեց այն տեսակետը, որ հայերենի և քարթվեկական ցեղերի լեզուների միջև շփումները տեղի են ունեցել շատ ավելի վաղ, քան կարծում էր Զ. Ֆոգտը:

Ակադեմիկոս էդ. Զրբաշյունը «XX դարի հայ գրականության ազգային յուրահատկության մասին» գեկուցմամբ փորձ արեց ընթացիկ հարյուրամյակի հայ գրականությունը դիտել իբրև մեկ ազգային-գեղարվեստական ամբողջություն, բացահայտել նրա յուրահատկությունները, որոնք հայ ժողովրդի գոյության առանձնահատուկ պայմանների արդյունքն են: Առաջին համաշխարհային պատերազմից հետո առաջացավ այնպիսի մի ինքնատիպ երևույթ, որպիսին սփյուռքահայ գրականությունն է: Վերջինս արևմտահայ գրականության պարզ շարունակությունը չէ, այլ աշխարհով մեկ ցրված հայության նոր կենսապայմանների արձագանք: Երևան եկավ նաև օտարազիր հայ հեղինակների խմբից, որոնք իրենց թեմատիկայով և ազգային հոգեբանությամբ սերտ ադերսներ ունեն հայ իրականության հետ: XX դ. հայ գրականությունը գեկուցողը բաժանեց երեք մեծ շրջափուլի. ա) 1901—1920 թվականներ, երբ հայ գրականությունը շարունակում էր զարգանալ իր երկու ճյուղերով, որոնք լինելով ներքուստ միասնական, որոշակի տարբերություններ ունեին լեզվի, թեմատիկայի, ընկալիչ ալմանդոթների առումով, բ) 1920-ից մինչև 1950-ական թվականների վերջը, երբ հայ սովետական գրականությանը զուգահեռ, բայց դեռ նրանից զգալիորեն մեկուսացած, իր ուրույն ընթացքով զարգանում է նաև սփյուռքի գրականությունը, գ) 1960-ական թվականներից առ այսօր, երբ նկատելիորեն ուժեղանում են հայ գրականության տարբեր հատմանների բազմազան կապերը, նրանց միասնության գիտակցությունը: Այս պարբերացումն էլ՝ իր ներքին շրջաբաժանումներով, նշեց էդ. Զրբաշյանը, պետք է դրվի «XX դարի հայ գրականության պատմություն» եռահատոր աշխատության հիմքում, որը նախատեսվում է ստեղծել ԶՍՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտում:

«XIX—XX դդ. հայ մշակույթի զարգացման առանձնահատկությունների մասին» գեկուցմամբ, որով հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր Կ. Խոսրովադյանը, նշվեց այն անխցելի կապը, որն առկա է հայ ժողովրդի պատմական ճակատագրի և նրա մշա-

Վուլթի միջև ժողովրդին վիճակված պատմական ճակատագրի բերումով հայ ազգային-մշակութային կյանքի կարևորագույն շատ իրադարձություններ տեղի ունեցան ոչ թե բուն Հայաստանում, այլ նրա սահմաններից դուրս (առաջին դրթի և պարբերականի հրատարակությունները, առաջին տպարանների ստեղծումը և այլն)։ XIX դ. սկզբին՝ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորումից հետո կազմավորվեցին հայ ժողովրդի հոգևոր կյանքի երկու հիմնական կենտրոններ՝ Կոստանդնուպոլսը արևմտահայության և Քիֆիսար արևելահայության համար։ Չնայած տարբեր կենտրոնների առկայությանը, ստեղծվեց մեկ ժողովրդի միասնական մշակույթ՝ նրա ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությամբ պայմանավորված մշակույթ, որն արտահայտում էր ժողովրդի նվիրական իդեալներն ու ձգտումները։ Անդրադառնալով նորագույն շրջանին, զեկուցողը շեշտեց, որ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմամբ ձևավորվեց հայության հոգևոր կյանքի մի միասնական կենտրոն՝ մայր հայրենիքում։ Դա էլ հենց հայ ժողովրդին խորհրդային իշխանության մատուցած մեծագույն ծառայություններից մեկն է։

Արվեստագիտության թեկնածու Գ. Գյուզալյանի զեկուցումը՝ «Խաղաղության համակարգը և նրա վերածանման ուղիները», նվիրված էր մի հարցի, որի լուծումն ունի պատմամշակութային հսկայական նշանակություն։ Հենվելով նոտագրված «Ջայնագրի» շարականների և խաղաղի բնագրերի համեմատական վերլուծության վրա, նա բերեց շարականների մի քանի նմուշներ և ցույց տվեց, որ դրանց երաժշտական կառուցվածքի հիմնական հատկությունները տրամաբանորեն արտացոլված են

նաև խաղային բնագրերում։ Այդ նմուշները, նկատեց նա, կարող են խաղալ երկվեզվյան բնագրի (բիլինգվալի) դեր և ի հայտ բերել խաղերի վերածանման ճիշտ ուղիներ։ Հենց այդպիսի մի փորձ՝ կապված պարզ խաղերի արժեքների բացահայտման հետ, տվեց զեկուցումը։

Սույն տողերի հեղինակը հանդես եկավ «Խորհնացու» գրական-ղեղագիտական հայացքները զեկուցմամբ։ Անդրադառնալով մատենագրության ազգային-հայրենասիրական բովանդակության, պատմագրական արժանի այլևայլ հատկանիշների մասին Խորհնացու արտահայտած տեսական դրույթների պարզաբանմանը, հիմնական շեշտը դրվեց այն կողմերի վրա, որոնք բացատրվում և իմաստավորվում են միայն V դ. Հայաստանի պատմագրական մտավոր-մշակութային կյանքի հանգամանքներով։

Հայագիտական հետազոտությունների միջադրյալին ընկերության շորտոգ գիտաժողովը կարևոր քայլ էր հայագիտության զարգացման արդի միտումները ճանաչելու և գիտական ինֆորմացիայի փոխանակման ուղղությամբ։

Սովետական գիտնականների պատվիրակությունը եղավ նաև Ժնևում և հանդիպումներ ունեցավ անդի հայ համայնքի ներկայացուցիչների հետ։ Այդ հանդիպումներից մեկի ժամանակ, որ անցկացվեց մարդաշատ մի դահլիճում, հայոց լեզվի ծագման և դարաբաղյան խնդրի մասին հանրամատչելի դասախոսություններով հանդես եկան Գ. Ջահուկյանն ու Կ. Խուդավերդյանը, որոնք պատասխանեցին նաև ներկաներին հետաքրքրող բազմաթիվ հարցերի։

Վ. Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ